



**Շահառուների խորհուրդի հաշվետվություն**  
**2006-2007թթ.**

***Նպատակները***

ՀՄՀ-Հայաստան ծրագրի կառավարման համակարգում Շահառուների խորհուրդը հանդիսանում է խորհրդակցական մարմին և կոչված է ապահովելու տարբեր շահառու խմբերի մասնակցությունը ծրագրի իրականացման բոլոր փուլերում: Շահառուների խորհուրդը (ՇԽ) ներկայացնում է քաղաքացիական հասարակության դիրքորոշումը ծրագրային հարցերում և որոշումների կայացման գործընթացում:



***Կառուցվածքը***

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը իր բնույթով, կառուցվածքով և գործառնություններով հանդիսացավ քաղաքացիական հասարակությունը ներկայացնող առանձնահատուկ մի կառույց, որը հետագայում կարող է քաղաքացիական հասարակության մասնակցության օրինակ ծառայել նմանօրինակ ծրագրերի իրականացմանը:

Շահառուների խորհուրդը բաղկացած է 15 անդամներից, ովքեր ներկայացնում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի Համաձայնագրով նախատեսված հիմնական շահառու խմբերը՝

- հասարակական կազմակերպություններից 9 ներկայացուցիչներ
- Ջրօգտագործողների ընկերություններից 2 ներկայացուցիչներ
- Ֆերմերային տնտեսություններից 2 ներկայացուցիչներ
- շահառու համայնքներից 2 ներկայացուցիչներ:

Շահառուների խորհուրդը իր կազմից 5 անդամների, ընտրության սկզբունքով, պատվիրակում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման խորհուրդ, որով քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է ստանում մասնակցել ծրագրի կառավարման գործընթացին:

2007թ. սեպտեմբերի 12-ի նիստում ՇԽ-ը լսեց Կառավարման խորհուրդ պատվիրակվածների հաշվետվությունը, որն ընդունվեց ի գիտություն:

***Հաշվետու ժամանակաշրջան***

Մայիսի 6-ից, 2006 մինչ սեպտեմբերի 29-ը, 2007

## ***Գործունեությունը***

ՇԽ աշխատանքում հատկանշականը այն էր, որ սկսել է գործել մինչև ծրագրի պաշտոնական մեկնարկը և չունենալով նմանօրինակ խորհրդի գործունեության նախադեպ՝ այն պետք է հստակեցներ անելիքը և իր մասնակցությունը ունենար ոչ միայն իր իսկ կանոնակարգային խնդիրների լուծմանը, այլ նաև Միջպետական Համաձայնագրով նախատեսված կառույցների, մասնագետների ընտրությանը և ընդհանրապես ծրագրի բնականոն ընթացքի ապահովմանը:

Շահառուների խորհուրդ իր գործունեությունը ծավալել է հետևյալ հիմնական ուղղություններով՝

### **1. Գործունեության կանոնակարգ**

Որպես գործունեության ուղեցույց և սկիզբ՝ ՇԽ անդամները նախաձեռնեցին և մշակեցին ՇԽ գործունեության կանոնակարգը (հաստատվել է 2006թ. օգոստոսի 22-ի նիստին): Այն իր մեջ ներառում է ՇԽ գործունեության շրջանակները, անդամների հիմնական պարտականությունները և իրավունքները, ինչպես նաև Կառավարման խորհուրդ անդամներ պատվիրակելու դրույթները:

### **2. Նիստեր/հանդիպումներ**

ՇԽ-ը որդեգրել է թափանցիկ աշխատանք, այն ամրագրել է կանոնակարգում և կարողացել է պատվով կատարել իրեն վերապահված պարտականությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում ՇԽ-ը գումարել է 18 նիստ, որտեղ քննարկման են դրվել բազմաթիվ ծրագրային հարցեր և առաջարկություններ, քննարկվել են ծրագրում քաղաքացիական հասարակության ներգրավման մեխանիզմները, տարածքային կենտրոններ հիմնելու հնարավորությունները, հաստատվել են մրցութային հանձնաժողովներում ՇԽ անդամների թեկնածուները և այլն:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պարբերաբար ՇԽ անդամներին ներկայացրել է գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, ծրագրային կարևոր փաստաթղթերը, որոնց շուրջ ստացել և քննարկել է ՇԽ կարծիքն ու դիրքորոշումը: Մասնավորապես ներկայացվել են մոնիտորինգի և գնահատման պլանը, ծրագրային հաշվետվությունները, գնումների գործընթացը, աշխատանքային և ֆինանսական պլանները և այլն:

Նիստերում տիրել է շահագրգիռ մթնոլորտ: Քննարկումներ են եղել բոլոր բաղադրիչների շուրջ և, որպես կանոն, դա ի դեպ ՇԽ-ի կանոնակարգի պահանջն է, նիստերին մասնակցություն են ունեցել քաղաքացիական հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ և լրատվամիջոցներ: Բազմակարծության և քվեարկության պայմաններում են կայացվել նիստերի բոլոր որոշումները:

Հանդիպում-քննարկումների շարքում իրականացվել են մի շարք միջոցառումներ ՇԽ անդամների նախաձեռնությամբ և մասնակցությամբ՝ հրավիրելով քաղաքացիական հասարակության ակտիվ անդամներին. այդ թվում քննարկումներ են տեղի ունեցել Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում:

2006թ. դեկտեմբերի 1-3-ը անցակցվել է ՀՄՀ-Հայաստանի և ՇԽ համատեղ աշխատանքային հանդիպում Ծաղկաձորում: Միջոցառումը նպատակ է ունեցել վերհանել համատեղ աշխատանքների ընթացքում առաջ եկած խնդիրները և գտնել համագործակցության նոր եզրեր և մոտեցումներ: Հանդիպման արդյունքում ստեղծվեց առաջիկա գործողությունների ժամանակացույց:

### 3. ՇԽ կողմից բարձրացված հարցերի քննարկում.

ՀՄՀ-Հայաստան ծրագրի բաղադրիչների ուղղությամբ ՇԽ անդամների քննարկումները և մտահոգությունները եղել են հետևյալ հիմնական հարցադրումների կապակցությամբ՝

#### **Վարչական հարցեր**

- վարչաֆինանսական ծախսերի չափը, դրանց բաշխումը

#### **Ճանապարհների վերականգնում**

- Ճանապարհային վերանորոգման աշխատանքների սկզբնակետերի և ընթացքի պարզաբանում.
- Շահառուների խորհրդի անդամներին Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի փաթեթների մանրամասն տվյալների տրամադրում.

#### **Ոռոգվող գյուղատնտեսություն**

- ծրագրի շահառուների, այսինքն, գյուղացիական տնտեսությունների համար ջրի մատչելիության հարցը,
- ջրօգտագործողների և ջուր մատակարարողների հարաբերակցությունների բարելավման, կարգավորման խնդիրներ,
- ջրամատակարարողներին էլեկտրաէներգիայի համար սուբսիդավորման քաղաքականության բարելավման հարցը,
- մեկ խորանարդ մետր ջրի սակագնի և Ջրօգտագործողների ընկերություններ կազմելու, ինչպես նաև ոռոգման ջրի որակի վերաբերյալ խնդիրները:

#### **Ջրից դեպի շուկա**

- տրամադրվելիք վարկերի տոկոսադրույքների վերաբերյալ,
- ծրագրի շրջանակներում վերապատրաստման ենթակա մասնակից ֆերմերների թվի,
- դասընթացներին ֆերմերների մասնակցության ապահովման,
- վերապատրաստման արդյունքում ստացված գիտելիքների ներդրման,
- վերադարձվելիք վարկերի գումարների հետագա օգտագործմանը վերաբերյալ,
- մարզերի բնակչության համար վարկային արտոնյալ պայմանների ստեղծման,
- Գենետիկորեն մոդիֆիկացված մթերքների ներկրման վերահսկման համակարգերի ստեղծման,
- այլ կազմակերպությունների միջոցով (ոչ բանկեր) վարկերի տրամադրման,
- «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի առանձին քննարկում կազմակերպելու հարցեր և առաջարկություններ:

#### **Գնումների գործընթաց**

- մրցութային գաղտնիք պարունակող ինֆորմացիային տիրապետելու Շահառուների խորհրդի բոլոր անդամների համար հավասար իրավունքների ապահովման հարցը.
- մրցույթի արդյունքները բողոքարկելու իրավունքների հարցը.
- կառավարման խորհրդի անդամների կողմից գաղտնի ինֆորմացիան չիրապարակելու հայտարարագիր ստորագրելու առաջարկությունը:

#### **Մոնիտորիզ և գնահատում**

- ԱՎԾ-ի կողմից իրականացվող հետազոտությունների արժանահավաստության և ԱՎԾ-ն որպես ծրագրի ազդեցության գնահատման միջոց օգտագործելու նպատակահարմարության հարցը.

- տվյալների որակի այլընտրանքային գնահատում անցկացնելու և ՀՄՀ/ՀՄԿ-ի կողմից օգտագործվող մեթոդաբանության մատչելիության հարցը:

#### **Բնապահպանություն և սոցիալական ազդեցություն**

- ՀՄՀ-Հայաստան ծրագրում ռիսկերի գնահատման և վերլուծության համակարգի առկայության հարցը.
- ՇՄԱԳ-ի համար, ՀՀ օրենսգրքով պատասխանատու կազմակերպության հստակեցման հարցը.
- կառավարման խորհուրդ ՇԽ-ի որպես բնապահպանական դիտորդի պատվիրակման հարցը:

#### **4. Արտագնա ներկայացումներ**

ՇԽ նախաձեռնել և աջակցել է ՀՄՀ-Հայաստանին Հանրապետության մի շարք մարզկենտրոններում (Շիրակ, Արմավիր, Կոտայք, Արագածոտն, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ) ծրագրի հանդիպում-ներկայացումներ կազմակերպելու հարցում, ինչպես նաև Հայաստանի Ագրարային Համալսարանում Հանրապետության տարբեր մարզերից ժամանած ֆերմերների և Հայաստանի Ագրարային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությամբ:

Արտագնա միջոցառումներն իրականացվել են համաձայն նախօրոք կազմված ժամանակացույցի, որը տեղադրվել է ՀՄՀ-Հայաստանի վեբ կայքում:

#### **5. Մասնակցություն մրցութային հանձնաժողովների աշխատանքներում**

Հաշվետու ժամանակաշրջանում ՇԽ անդամները իրենց կարևոր լուծման են ներդրել ծրագրի ամենակարևոր բաղադրիչներից մեկի՝ գնումների գործընթացի բաց և թափանցիկ իրականացման գործում: ՇԽ անդամները ներգրավված են եղել մեկ տասնյակից ավելի մրցութային հանձնաժողովներում, մասնավորապես՝ Ռոռզման և ճանապարհաշինության ենթածրագրերի շրջանակներում աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների ընտրության գործընթացներին, ՀՄՀ-Հայաստանի ֆինանսական գործակալի ընտրությանը և այլն: Մասնակցել են ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակազմի ընտրության բոլոր հանձնաժողովներում:

#### **6. Անհատական գործունեություն/ուսումնասիրություններ**

Հաշվի առնելով այն փաստը, որ յուրաքանչյուր ՇԽ անդամ, ելնելով իր գործունեության բնույթից աշխատում է ծրագրի այս կամ այն շահառու խմբի հետ, ՇԽ անդամները պարբերաբար քննարկել են ծրագրային գործողությունները լայն շահառու խմբերի հետ և ներկայացված հարցադրումներն ու առաջարկությունները հղել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակազմին և ՇԽ անդամներին՝ քննարկելու և գտնելու հնարավոր լուծումները:

Ծրագրի բաղադրիչների, մասնավորապես Գյուղական ճանապարհների վերականգնման շրջանակներում, ՇԽ անդամների իրականացրած ուսումնասիրությունները, որտեղ վեր են հանվել լուծում պահանջող այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են այլ դոնոր կազմակերպությունների և ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում վերանորոգվելիք ճանապարհների կրկնությունները և դրանց արդյունքում ազատվող ֆինանսական միջոցների տեղաբաշխումը, դոլլար-դրամ փոխարժեքի ազդեցությունը ծրագրի արդյունքների վրա և այլն:

#### **7. Ընտրություններ**

Շահառուների խորհրդի նոր կազմի ընտրությունների արդյունավետ կազմակերպման նպատակով ՇԽ անդամները նախաձեռնեցին և իրականացրեցին մի շարք հանդիպումներ և քննարկումներ՝ կոչ

անելով քաղաքացիական հասարակությանը ներկայացնելու իրենց դիրքորոշումը ՇԽ ընտրական կարգի վերաբերյալ: Ստացված բոլոր առաջարկությունները պատշաճ ձևով քննարկվեցին ՇԽ-ի կողմից և բոլորին տրվեցին պատասխաններ և լուծումներ: Արդյունքում ձևավորվեց ընտրությունների անցկացման կարգի նախագիծ, որը հաստատվեց Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովում:

#### **8. ՇԽ աշխատանքների թափանցիկության ապահովումը**

ՇԽ աշխատանքների թափանցիկությունն ապահովել է կիրառելով՝

ա/ վեբ կայք. ՀՄՀ-Հայաստանի վեբ կայքում ստեղծվել է առանձին էջ նվիրված ՇԽ աշխատանքներին, որը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝ կառուցվածք, նիստեր/արձանագրություններ, խորհրդակցական գործընթաց, ընտրություններ: Վեբ կայքում մշտապես տեղադրվել է թարմ տեղեկատվություն ՇԽ աշխատանքների վերաբերյալ:

բ/ քաղաքացիական հասարակության լայն շերտերին ՇԽ աշխատանքների, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի մասին տեղեկատվության տարածում

գ/ ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցություն ՇԽ նիստերին

դ/ ՉԼՄ-ների ներգրավում ՇԽ աշխատանքներում

ե/ համայնքային հանդիպումներ

#### **9. Մամուլի և լրատվամիջոցների հետ աշխատանք**

ՇԽ-ը մշտապես կարևորել է համագործակցությունը ՉԼՄ միջոցների հետ, որոնք պարբերաբար մասնակցել են ՇԽ նիստերին և համապատասխան տեղեկատվություն են տրամադրել հասարակությանը:

**ՇԽ գործունեությանը միտված քննադատությունները քննարկվել են նիստերի ժամանակ և կառուցողական առաջարկությունները հաշվի են առնվել աշխատանքներում:**

Հարկավոր է ընդգծել, ՇԽ-ում նկատվել են մանցօրինակ աշխատանքների փորձի պակաս, քննարկումների երկարաձգում կամ կենտրոնացում հատկապես կանոնակարգային հարցերի վրա: Այս ամենը բնական էր, որոնք ժամանակի ընթացքում շտկվել են:

Այսպիսով, ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի առաջին կազմը իրեն վերապահված իրավասությունների և պարտականությունների շրջանակներում հնարավորինս իրագործել է իր առաքելությունը և կարծում ենք, որ կուտակված փորձը, ստեղծված փաստաթղթային բազան ծանրակշիռ հիմք կհանդիսանան ՇԽ նորընտիր կազմի առավել նպատակային ու արդյունավետ գործելակերպի համար:

*Շահառուների խորհրդի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել ՀՄՀ-Հայաստան ծրագրի վեբ կայք [www.mca.am](http://www.mca.am) հասցեով:*